Մեր կողմից կառավարվող ֆոնդերի ներդրումները և եկամտաբերությունը

31 մարտ 2022

Amundi acba
ASSET MANAGEMENT

Ֆոնդերի ներդրումային կառուցվածքը և աշխարհագրությունը

Amundi acba
ASSET MANAGEMENT

2022թ. մարտի վերջի դրությամբ մեր կողմից կառավարվող երեք կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների ընդհանուր մեծությունը կազմեց շուրջ 261 մլրդ դրամ՝ միայն 1-ին եռամսյակի ընթացքում աճելով ավելի քան 12 մլրդ դրամով: Այդ միջոցները ներդրված են տարբեր ակտիվների դասերում՝ ստորև ներկայացված համամասնությամբ.

Հավասարակշված Ֆոնդ (AMCON)



Պահպանողական Ֆոնդ (AMCON)



Կայուն եկամտային Ֆոնդ (AMFIX)



Կանխիկ	Ավանդներ	ՀՀ պետական պարտատոմս	ՀՀ կորպ. պարտատոմս	Պարտ. ֆոնդեր	Բաժն. ֆոնդեր	ԵՄ-Հայաստան ՓՄՁ ֆոնդ

Amundi acba ASSET MANAGEMENT

Այդ միջոցները ներդրված են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ դրա սահմաններից դուրս և ներառում են տարբեր պետությունների, միջազգային կազմակերպությունների և բազմաթիվ ըկերությունների կողմից ուղղակիորեն և անուղղակիորեն թողարկված արժեթղթեր: Ներդրումների աշխարհագրական քարտեզը ներկայացված է ստորև.



Amundi acba
ASSET MANAGEMENT

Ֆոնդերի եկամտաբերությունը

Amundi acba
ASSET MANAGEMENT

Ինչ վերաբերում է ֆոնդերի եկամտաբերության երկարաժամկետ ցուցանիշներին՝ ստեղծման պահից միջին տարեկան եկամտաբերությունը 2022թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 7.6%-8.5%:
Ֆոնդերի միջին տարեկան և 1-ին եռամսյակի եկամտաբերությունները ներկայացված են ստորև աղյուսակում.

Ֆոնդ	Ստեղծման պահից միջին տարեկան	2022թ. 1-ին եռամսյակ
Հավասարակշռված (AMBAL)	8.5%	-1.5%
Պահպանողական (AMCON)	8.2%	-1.4%
Կայուն եկամտային (AMFIX)	7.6%	-0.8%

Ֆոնդերը ս.թ. 1-ին եռամսյակում արձանագրել են բացասական եկամտաբերություն՝ պայմանավորված հիմնականում ՀՀ պետական պարտատոմսերի և արտասահմանյան պարտատոմսերի և բաժնետոմսերի գների նվազմամբ, որն էլ, իր հերթին, պայմանավորված էր ինչպես ՀՀ տնտեսությունում և համաշխարհային տնտեսություններում առկա գնաճի բարձր մակարդակով այնպես էլ էական բարձր անորոշությամբ:

Amundi acba
ASSET MANAGEMENT

Հավասարակշռված ֆոնդ (AMBAL)

Եթե Ամունդի-Ակբա-ի կողմից կառավարվող ֆոնդերի ստեղծման պահից արձանագրված եկամտաբերությունը վերածենք դրամային արտահայտության, ապա այն հավասարակշռված ֆոնդի դեպքում կկազմի մոտ մեկ միլիարդ ՀՀ դրամ կամ ֆոնդի զուտ ակտիվների շուրջ 25%-ը:



Պահպանողական ֆոնդ (AMCON)

Պահպանողական ֆոնդի դեպքում 254 մլրդ ՀՀ դրամ զուտ ակտիվներից շուրջ 42 մլրդ ՀՀ դրամը (ֆոնդի զուտ ակտիվների մոտավորապես 16.5%-ը) գոյացել է կառավարման արդյունքում ձևավորված եկամտի հաշվին:



Կայուն եկամտային ֆոնդ (AMFIX)

Կայուն եկամտային ֆոնդի 2.3 մլրդ ՀՀ դրամ զուտ ակտիվներից շուրջ 0.5 մլրդ ՀՀ դրամը (ֆոնդի զուտ ակտիվների շուրջ 21%-ը) գոյացել է կառավարման արդյունքում ձևավորված եկամտի հաշվին:



Սա նշանակում է, որ ֆոնդերի եկամտաբերությունը անհրաժեշտ է դիտարկել երկարաժամկետ կտրվածքով, քանի որ դրանց կառավարման ռազմավարությունն ունի երկարաժամկետ բնույթ:

Այսինքն՝ կարճաժամկետ հատվածներում անհրաժեշտ չէ կենտրոնանալ ֆոնդերի եկամտաբերության ցուցանիշների վրա, քանի որ դրանց, հաճախ, հետեւում է եկամտաբերության արագ վերականգնման ժամանակահատվածը, որի մասին է վկայում հայաստանյան կենսաթոշակային ֆոնդերի կառավարման ավելի քան 7 տարվա պատմությունը:

- amundi-acba.am
- Հեռ. 011 31 00 00
- Info-armenia@amundi.com

Իրավական ծանուցում

Սույն փաստաթուղթը նախատեսված է միայն տեղեկատվական նպատակների համար և չի ենթադրում և/կամ պարունակում որևէ խորհրդատվություն, առաջարկ, միջնորդություն՝ օգտվել «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց որևէ ծառայությունից:
Փաստաթուղթը հիմնված է «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ կողմից վստահելի համարվող աղբյուրների վրա, սակայն դրա բացարձակ ճշգրիտ կամ ամբողջական լինելը չի երաշխավորվում: Սույն փաստաթղթում առկա տեղեկատվությունը ներկայացվել է՝ առանց հաշվի առնելու կենսաթոշակային ֆոնդերի որևէ մասնակցի կոնկրետ ներդրումային նպատակները, ֆինանսական վիճակը կամ հատուկ կարիքը:
Մինչև որևէ կենսաթոշակային ֆոնդին միանալը բոլոր պոտենցիալ մասնակիցները պետք է գնահատեն իրենց ռիսկի հակվածության համապատասխանությունը եկամտաբերության իրենց ակնկալիքներին և պետք է ուսումնասիրեն յուրաքանչյուր ֆոնդի համար գործող իրավական ակտերը: Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցները ֆոնդի ընտրություն կատարելիս չպետք է հիմնվեն միայն սույն փաստաթղթի վրա:
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն չի կրում որևէ պատասխանատվություն, այդ թվում ուղղակի կամ անուղղակի, որը կարող է առաջանալ այս նյութում պարունակվող տեղեկատվության օգտագործման արդյունքում: «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն որևէ կերպ չի կարող պատասխանատու լինել տվյալ տեղեկատվության հիման վրա մասնակիցների կողմից ընդունված ներդրումային որոշումների համար:
Ֆոնդերի նախկին եկամտաբերության ցուցանիշները չեն հանդիսանում վստահելի կողմնորոշիչ ընթացիկ կամ ապագա եկամտաբերության ցուցանիշների համար:
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ է, որը ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0002 ներդրումային ֆոնդի կառավարման լիցենզիայի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է կենսաթոշակային ֆոնդերի կառավարման գործունեություն: Գրանցված գրասենյակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10, տարածք 100-101 հասցեում:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ, 2022

Amundi acba
ASSET MANAGEMENT